

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



## ԸՆԹԱՑԻԿ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ՝ 2018  
ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

### Հաշվեքննության հիմքը

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2019 թվականի մարտի 5-ի թիվ 4/7 որոշում

### Հաշվեքննության օբյեկտը

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

### Հաշվեքննության առարկան

2018 թվականի պետական բյուջեի կատարման կազմակերպում:

### Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը

2018թ. հունվարի 1-ից մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ:

### Հաշվեքննության կատարման ժամկետը

2019թ. մարտի 19-ից մինչև 2019թ. մայիսի 31-ը ներառյալ:

### Հաշվեքննության մեթոդաբանությունը

Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցման, վերահաշվարկի և վերլուծական ընթացակարգերը:

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ ՀՀ կառավարության հաշվետվության համաձայն (այսուհետ՝ Հաշվետվություն), ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի **եկամուտները** «ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսվել են 1,308,284,867.7 հազ. դրամ: 2018 թվականի ընթացքում պետական բյուջեի եկամուտները ՀՀ կառավարության որոշումներով ավելացել են 57,047,478.0 հազ. դրամով, ինչի արդյունքում ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի եկամուտների ճշտված ծրագիրը կազմել է 1,365,332,345.7 հազ. դրամ: 2018 թվականի պետական բյուջեի փաստացի եկամուտները կազմել են 1,341,690,590.9 հազ. դրամ, որը Օրենքով նախատեսված ցուցանիշի նկատմամբ կատարվել է 102.6%-ով, իսկ ճշտված ծրագրի նկատմամբ՝ 98.3%-ով:

2018 թվականի պետական բյուջեի ընդհանուր եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են 22.4% (2017 թվականին՝ 22.2%):

Օրենքով ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի ընդամենը **ծախսերը** նախատեսվել են 1,465,200,573.2 հազ. դրամ, որոնք 2018 թվականի ընթացքում ՀՀ կառավարության որոշումներով ավելացել են 62,067,488.9 հազ. դրամով: Արդյունքում ծախսերի ճշտված ծրագիրը կազմել է 1,527,268,062.1 հազ. դրամ, որը ներառում է 43,788,469.9 հազ. դրամ արտաբյուջետային միջոցների հաշվին նախատեսված ծախսը: Ընդամենը փաստացի ծախսերը, ներառյալ 34,053,287.9 հազ. դրամ փաստացի արտաբյուջետային ծախսերը, կազմել են 1,447,083,011.5 հազ. դրամ կամ Օրենքով նախատեսված ցուցանիշի 98.8%-ը, իսկ ճշտված ծրագրի 94.7%-ը: 2018 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 24.1%՝ 2017 թվականի 27.0%-ի համեմատ:

Օրենքով ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի **դեֆիցիտը** հաստատվել է 156,915,705.5 հազ. դրամ: ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախատեսված դեֆիցիտը տարվա ընթացքում ճշտված ծրագրով ավելացել է 5,020,010.9 հազ. դրամով՝ կազմելով 161,935,716.4 հազ. դրամ: ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի կատարման արդյունքում գրանցվել է 105,392,420.6 հազ. դրամի դեֆիցիտ, որն Օրենքով նախատեսվածի 67.2%-ն է, իսկ տարեկան ճշտված ծրագրով

նախատեսվածի՝ 65.1%-ը: 2018 թվականին դեֆիցիտը/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 1.8%՝ 2017 թվականի 4.8%-ի համեմատ:

2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ **ՀՀ պետական պարտքը** կազմել է 3,349.0 մլրդ դրամ (6,922.9 մլն ԱՄՆ դոլար), որից՝ ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 2,676.5 մլրդ դրամ (5,532.9 մլն ԱՄՆ դոլար), իսկ ՀՀ ներքին պետական պարտքը կազմել է 672.4 մլրդ դրամ (1,390.0 մլն ԱՄՆ դոլար):

### ***Ղեկավարության արձագանք***

Ներկայացված են ՀՆԱ-ի նկատմամբ եկամուտների, ծախսերի և դեֆիցիտի 2018 և 2017 թվականների ոչ համադրելի ցուցանիշները:

### ***Հաշվեքննիչ պալատի մեկնաբանությունը***

Հաշվեքննիչ պալատի կողմից համադրվել և վերը ներկայացվել են ՀՆԱ-ի նկատմամբ եկամուտների, ծախսերի և դեֆիցիտի 2018 և 2017 թվականների **փաստացի** ցուցանիշները: Հաշվեքննիչ պալատի կարծիքով, համադրելիության ապահովման համատեքստում միասնական հաշվի ներդրման արդյունքում պետական բյուջեի եկամուտների 48.1 մլրդ դրամանոց աճ 2018 թվականին ներկայացնելը հիմնավոր չէ, քանի որ այդ գումարը սպասվող բյուջետային եկամուտ է 2019 թվականի համար, ուստի առաջանալու է կրկնահաշվարկ:

## II. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

1. Արձանագրվել է անհամապատասխանություն «ՀՀ պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով, որի արդյունքում խեղաթյուրվել են ներքին և արտաքին տոկոսավճարների մեծությունները: Մասնավորապես, համաձայն «ՀՀ պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի, ներքին պետական պարտքի աղբյուրներ են հանդիսանում՝ 1) ռեզիդենտների կողմից ձեռք բերված պետական գանձապետական և արտարժույթով թողարկված պարտատոմսերը, 2) ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից կառավարությանը տրամադրված փոխառությունները և վարկերը, 3) ներքին պետական երաշխիքները: Համաձայն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 09.01.2007թ. թիվ 5 հրամանի, ներքին տոկոսավճարները բոլոր այն տոկոսավճարներն են, որոնք վճարվել են կամ հաշվեգրվել են ներքին աղբյուրներին: Այսպիսով, ռեզիդենտների կողմից ձեռք բերված արտարժույթային պետական պարտատոմսերը համարվում են ներքին պարտքի ֆինանսավորման աղբյուր և վերջիններիս սպասարկման համար վճարվող տոկոսավճարները պետք է հաշվառվեն որպես ներքին տոկոսավճարներ: Պարզվել է, որ 2014 թվականից մինչև այժմ ՀՀ պետական բյուջեի կատարողականի հաշվետվություններում՝ ներքին տոկոսավճարներ հոդվածում, ներառված չեն ռեզիդենտների կողմից ձեռք բերված արտարժույթային պետական պարտատոմսերի համար վճարված տոկոսավճարները: 2018 թվականին արտարժույթային պետական պարտատոմսերի սպասարկման համար վճարված տոկոսավճարը կազմել է 31.8 մլրդ ՀՀ դրամ:

### ***Ղեկավարության արձագանք***

Համաձայն 2013թ. սեպտեմբերի 30-ին և 2015թ. մարտի 26-ին Հայաստանի Հանրապետության ու «CITIBANK, N.A., LONDON BRANCH» և «CITIBANK N.A., NEW YORK BRANCH» ընկերությունների հետ կնքված «Ֆիսկալ գործակալի պայմանագրի» («Fiscal Agency Agreement»), թողարկված պարտատոմսերի պահառության գործառույթները վստահված են Euroclear, Clearstream (Luxembourg) և the Depository Trust Company ընկերություններին, որոնք էլ կարող են տրամադրել տեղեկատվություն որոշակի պահի դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի կառուցվածքի մասին՝ ներառյալ արժեկտրոնի վճարման պահի դրությամբ, որն անհրաժեշտ է արձանագրված փաստը (այն է՝ արտարժույթային պարտատոմսերի սպասարկման ծախսերի բաժանումը ներքին և արտաքին պարտքի միջև) շտկելու համար:

Դեռևս 2014թ. մարտին ՀՀ ֆինանսների նախարարությունը փորձել է ստանալ նման տեղեկատվություն CITIBANK-ից, ի պատասխան CITIBANK-ը հայտնել է, որ՝

- Euroclear-ը և Clearstream-ը նման տեղեկատվություն չեն կարող տրամադրել՝ ելնելով իրենց մոտ գործող գաղտնիքի պահպանման իրավական սահմանափակումներից,
- The Depository Trust Company-ից հիշյալ տեղեկատվությունը Թողարկողը կարող է ստանալ անմիջապես, և այդ ծառայությունը վճարովի է, ինչը նպատակահարմար չէ, քանի որ ստացված տեղեկատվությունը չի արտացոլելու պարտատոմսերի սեփականատերերի վերաբերյալ ամբողջական պատկերը:

Նպատակ ունենալով ապահովել «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի պահանջը (պետական պարտքի տարանջատումը ներքին և արտաքին պարտքի բաղադրիչների՝ ռեզիդենտության սկզբունքի հիման վրա)՝ ՀՀ ֆինանսների նախարարությունն արտարժույթային պետական պարտատոմսերի գծով պարտքի պաշարը բաժանում է ներքին և արտաքին պարտքի միջև՝ հիմք ընդունելով ՀՀ կենտրոնական բանկից ստացվող վիճակագրական տեղեկատվությունը, որը վերջինս հավաքագրում է ֆինանսական հաստատություններից և որտեղ տեղեկատվությունը պարտատոմսերի (այդ թվում՝ նաև արտարժույթային) սեփականատերերի կառուցվածքի վերաբերյալ տրամադրվում է յուրաքանչյուր ուրբաթ օրվա դրությամբ: Ուստի, հիշյալ տեղեկատվությունը կարող է օգտագործվել պարտքի պաշարի տարանջատման համար, բայց ոչ վճարված արժեկտրոնի կամ մայր գումարի տարանջատման համար, քանի որ պարտադիր չէ, որ արժեկտրոնի վճարման օրը հանդիսանա ուրբաթ օր, որի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկը ստանում է իր վիճակագրական հաշվետվությունները:

**Հաշվեքննիչ պալատի մեկնաբանությունը**

ՀՀ ֆինանսների նախարարությունը չի առարկել արձանագրված փաստին, այլ ներկայացրել է բացատրություն, թե ինչու այն չի կարողանում ապահովել օրենսդրության պահանջը:

**2. Արձանագրվել է անհամապատասխանություն «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ կետերի մասով,** համաձայն որի Հայաստանի Հանրապետությանը և համայնքներին ամրագրված բոլոր բյուջետային միջոցները պետք է հաշվեգրվեն, շրջանառվեն գանձապետական միասնական հաշվով, մասնավորապես՝ ՊՈԱԿ-ներին, ՀՈԱԿ-ներին, ԲԸ-ին, Հիմնադրամներին, ինչպես նաև «Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրի կառավարման գրասենյակ պետական հիմնարկին տրամադրված բոլոր բյուջետային միջոցները:

Պետք է նշել, որ ՀՀ կառավարության նախաձեռնությամբ 2013 թվականի ապրիլի 30-ին կատարվել է փոփոխություն «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ կետում և արդեն, ըստ օրենքի, Գանձապետական միասնական հաշիվը ներառում է նաև պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների բանկային սպասարկման համար ենթահաշիվները: Սակայն, չնայած այն հանգամանքին, որ արդեն չորս տարի է, ինչ կատարվել է այդ փոփոխությունը, մինչ 2018թ. վերջին ամիսները ՊՈԱԿ-ների հաշիվները գտնվել են առևտրային բանկերում, իսկ ՀՈԱԿ-ների ԲԸ-ների և Հիմնադրամների հաշիվները դեռևս շարունակում են մնալ առևտրային բանկերում:

**Ղեկավարության արձագանք**

ՀՀ կառավարության նախաձեռնությամբ 2013 թվականի ապրիլի 30-ին կատարվել է փոփոխություն «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ կետում, որի համաձայն գանձապետական միասնական հաշիվը ներառում է նաև պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների բանկային սպասարկման համար ենթահաշիվները:

Վերոնշյալ փոփոխության արդյունքում անհրաժեշտություն առաջացավ փոփոխություն կատարել նաև «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի «ե» մասում, ըստ որի պետական ոչ առևտրային կազմակերպությունները հաշվարկային հաշիվներ են բացում բանկերում: 2017թ. դեկտեմբերի 29-ին «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում կատարվեց համապատասխան փոփոխություն, որի համաձայն՝ պետական ոչ առևտրային կազմակերպությունները հաշիվները բացում են գանձապետարանում (համայնքային կազմակերպության դեպքում՝ բանկում կամ գանձապետարանում): Մինչույն ժամանակ, կատարվել են նաև փոփոխություններ «Հիմնադրամների մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքներում, որոնց համաձայն հիմնադրամները և 50 տոկոսից ավելի պետական կամ համայնքի կամ պետական ու համայնքի բաժնեմասեր (հանրագումարով) ունեցող ընկերությունը, ինչպես նաև 50 տոկոսից ավելի պետական կամ համայնքի բաժնեմաս կամ պետական ու համայնքի (հանրագումարով) բաժնեմասեր ունեցող ընկերության հիմնադրած ընկերությունները կարող են բացել հաշիվներ նաև գանձապետարանում:

Վերոնշյալ փոփոխությունների հետևանքով, ՊՈԱԿ-ների հաշիվները առևտրային բանկերից, ըստ Կառավարության կողմից սահմանված ժամանակացույցի, մինչև 2018 թվականի դեկտեմբերի 1-ը տեղափոխվել են գանձապետարան, և դրանց նկատմամբ 2019 թվականի հունվարի 1-ից սկսած

կիրառվում է նախնական հսկողություն նույն կարգով, ինչ բյուջետային հիմնարկների հաշիվների նկատմամբ:

### **Հաշվեքննիչ պալատի մեկնաբանությունը**

Քանի որ հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը 2018 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն է, ՀՀ հաշվեքննիչ պալատն արձանագրել է, որ մինչև 2018թ. վերջին ամիսները ՊՈԱԿ-ների հաշիվները գտնվել են առևտրային բանկերում: Հաշվեքննիչ պալատի դիրքորոշումն այն է, որ լիարժեքորեն պետք է կատարվի «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ կետերի պահանջը, համաձայն որոնց Հայաստանի Հանրապետությանը և համայնքներին ամրագրված բոլոր բյուջետային միջոցները պետք է հաշվեգրվեն, շրջանառվեն գանձապետական միասնական հաշվով:

**3. Արձանագրվել է անհամապատասխանություն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի մասով**, որի համաձայն հաշվեքննողը իրավասու է հաշվեքննության օբյեկտի ղեկավարից կամ նրան փոխարինող անձից պահանջելու հաշվեքննության առարկային առնչվող առկա էլեկտրոնային շտեմարանների հասանելիություն, փաստաթղթեր, անհրաժեշտ տեղեկանքներ, տեղեկատվություն, հաշվապահական հաշվետվություններ, դրանցից դուրս գրելու տեղեկություններ և ստանալու պարզաբանումներ:

**Հաշվեքննիչ պալատը 05.04.2019թ. թիվ ՀՊԵ-156 գրությամբ** ՀՀ ֆինանսների նախարարությունից պահանջել է հասանելիություն «Mulberry» համակարգերին (Mulberry 1.3 և Mulberry 1.3.108), ինչը չի ապահովվել:

### **Ղեկավարության արձագանք /«Mulberry» համակարգի մասով/**

Գրությամբ ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահը հայտնել է, որ Հաշվեքննիչ պալատը ՀՀ ֆինանսների նախարարությունում իրականացնում է 2018 թվականի պետական բյուջեի կատարման կազմակերպման նկատմամբ հաշվեքննություն և խնդրել է ներկայացնել Գրությունում նշված խնդիրների մասին տեղեկատվություն և բացատրություն, ինչպես նաև հղում կատարելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետի 2)-րդ ենթակետին՝ խնդրել է «... հաշվեքննողների համար ապահովել ՀՀ ֆինանսների նախարարությունում առկա էլեկտրոնային շտեմարանների, մասնավորապես «Mulberry» համակարգերի (Mulberry 1.3 և Mulberry 1.3.108) նկատմամբ լիարժեք հասանելիություն»:

Պատասխան գրությամբ տրամադրվել է պահանջվող տեղեկատվությունը, սակայն էլեկտրոնային շտեմարաններին հասանելիության վերաբերյալ անդրադարձ



չի կատարվել՝ նկատի ունենալով, որ դրանք կտրամադրվեն աշխատանքային կարգով:

**Հաշվեքննիչ պալատի մեկնաբանությունը**

«Mulberry» համակարգը հանդիսանում է հաշվեքննության առարկային առնչվող էլեկտրոնային շտեմարան, որին օրենքով սահմանված կարգով պահանջված հասանելիությունը չի տրամադրել: Խախտվել է Հաշվեքննիչ պալատի մասին ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը, այն է՝ հաշվեքննության օբյեկտի պաշտոնատար անձը չի կատարել հաշվեքննողների օրինական պահանջը:

4. ՀՀ կառավարության 2016թ. փետրվարի 18-ի նիստի թիվ 6 արձանագրային որոշման հավելված 1-ի համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարության համար մշակվել է ներքին աուդիտի հատուկ էլեկտրոնային ծրագրային համակարգ, որը նպատակ ունի աջակցել ներքին աուդիտի աշխատանքների կազմակերպմանը, հաշվետվությունների պատրաստմանն ու գործառույթների կատարման նկատմամբ հսկողությանը և մոնիտորինգի իրականացմանը:

«Կազմակերպությունների ներքին աուդիտի որակի երաշխավորման նպատակով կազմակերպության գործունեության հետ չառնչվող անձանց կողմից կազմակերպության ներքին աուդիտի համակարգի գնահատումների իրականացման, ինչպես նաև ստուգում իրականացնող մարմինների ել արտաքին աուդիտի մարմնի հետ ներքին աուդիտի համագործակցության կարգերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2013թ. օգոստոսի 8-ի թիվ 896-Ն որոշման 20-րդ կետով, եթե հանրային հատվածի կազմակերպություններում առկա է ներքին աուդիտի միասնական տեղեկատվական համակարգ, ապա ներքին աուդիտի արտաքին գնահատում կարող է իրականացվել համակարգի միջոցով մուտքագրված տեղեկատվության ուսումնասիրման եղանակով:

Այդ նպատակով, դեռևս 2014թ.-ին ՀՀ ֆինանսների նախարարի 2012թ. փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանում կատարվել էր լրացում, համաձայն որի, ներքին աուդիտն անհրաժեշտ էր իրականացնել ներքին աուդիտի միասնական կառավարման տեղեկատվական համակարգի միջոցով, ինչպես նաև ներքին աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագրի կատարման նպատակով ներքին աուդիտի աշխատանքների գնահատումների համար հիմք ընդունել միայն Ներքին աուդիտի միասնական կառավարման տեղեկատվական համակարգի միջոցով իրականացված աշխատանքները (բացառությամբ օրենքով սահմանված պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների աուդիտի աշխատանքների):

Մինչդեռ Հաշվեքննության օբյեկտի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 2018թ. ներքին աուդիտի

ուրրտին առնչվող խնդիրների վերլուծության և գնահատման իրականացման արդյունքում՝ ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 18-ի թիվ 262-Ն հրամանով ուժը կորցրած են ճանաչվել ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանի այն կետերը, որոնք սահմանում են Ներքին աուդիտի միասնական կառավարման տեղեկատվական համակարգի շահագործման պահանջը:

### III. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

2018 թվականի ՀՀ պետական բյուջեով սահմանված ծրագրերի իրականացումը բնութագրող ոչ ֆինանսական ցուցանիշների կատարման հաշվեքննությամբ արձանագրվել է, որ՝

- 231 քաղաքականության միջոցառումների գծով (ընդհանուրի 18.6%-ը) որևէ ոչ ֆինանսական ցուցանիշ սահմանված չի եղել:  
Ընդ որում, ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունում ՀՀ հաշվեքննիչ պալատն առաջարկել էր սահմանել ոչ ֆինանսական ցուցանիշներ այն քաղաքականության միջոցառումների գծով, որոնց համար այդպիսիք դեռևս սահմանված չեն: Հարկ է արձանագրել, որ նախորդ տարվա համեմատությամբ ոչ միայն նշված առաջարկությունը չի կատարվել, դեռ ավելին՝ որևէ ոչ ֆինանսական ցուցանիշ չպարունակող քաղաքականության միջոցառումների թիվն աճել է 1.2 տոկոսային կետով:
- 803 քաղաքականության միջոցառման գծով (ընդհանուրի 64.8%-ը) սահմանված է եղել միայն մեկ տեսակի (հիմնականում՝ քանակական) ոչ ֆինանսական ցուցանիշ, իսկ ոչ ֆինանսական ցուցանիշների տեսակային լիարժեք կազմ սահմանված է եղել միայն 112 քաղաքականության միջոցառումների գծով (ընդհանուրի 9%-ը):  
Ընդ որում, ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունում ՀՀ հաշվեքննիչ պալատն առաջարկել էր սահմանել ոչ ֆինանսական ցուցանիշների տեսակային առավել լիարժեք կազմ՝ մեծացնելով ոչ քանակական տեսակի ոչ ֆինանսական ցուցանիշների ծածկույթը՝ հատկապես շեշտադրելով որակական տեսակի ոչ ֆինանսական ցուցանիշների ծածկույթի ընդլայնումը: Հարկ է արձանագրել, որ նախորդ տարվա համեմատությամբ ոչ միայն նշված առաջարկությունը չի կատարվել, դեռ ավելին՝ միայն մեկ տեսակի (հիմնականում՝ քանակական) ոչ ֆինանսական ցուցանիշ պարունակող քաղաքականության միջոցառումների թիվն աճել է 5.5 տոկոսային կետով, ոչ ֆինանսական ցուցանիշների տեսակային լիարժեք կազմ պարունակող քաղաքականության միջոցառումների թիվը նվազել է 4.2 տոկոսային կետով, իսկ առավել արժեքավոր՝ որակական տեսակի ոչ ֆինանսական ցուցանիշների թիվը պակասել է 109 հատով:
- Ոչ ֆինանսական ցուցանիշների պլանավորված և փաստացի մեծությունների շեղումների վերաբերյալ բացատրությունները, ինչպես և նախորդ տարի, հիմնականում, կա՛մ բացակայում են, կա՛մ ներկայացված են այնպես, որ չեն տալիս շեղման պատճառների վերաբերյալ լիարժեք պատկերացում:

**Ղեկավարության արձագանք**

2019 թվականին ամբողջությամբ անցում է կատարվել ծրագրային բյուջետավորման: ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին օրենքը կազմվել և ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվել է ծրագրային բյուջետավորման ձևաչափերին համապատասխան: Պետական բյուջեով յուրաքանչյուր ծրագրի համար սահմանվել է մեկ պատասխանատու պետական մարմին, ինչով պայմանավորված ի տարբերություն նախորդ տարիների որոշակի ծրագրեր որոնք նախկինում մի քանի մարմիններ էին իրականացնում տրոհվել են մի քանի մասերի: Յուրաքանչյուր ծրագրի համար սահմանվել են վերջնական արդյունքային ցուցանիշներ (բացառություն են կազմում պետական մարմինների պահպանման ծրագրերը): Նույնը վերաբերում է նաև միջոցառումներին, որոնց մասով որպես պատասխանատու են սահմանվել կատարող պետական մարմինները: Այս հանգամանքով պայմանավորված միջոցառումների թիվը նույնպես ավելացել է: Միջոցառումների համար սահմանվել են ուղղակի արդյունքային ինչպես ֆինանսական այնպես էլ՝ ոչ ֆինանսական ցուցանիշներ: Հաշվի առնելով այս հանգամանքները, ինչպես նաև այն փաստը, որ 2019 թվականի պետական բյուջեն պետք է հաստատվեր ծրագրային ձևաչափով, վերը թվարկված փոփոխությունները ինչպես ծրագրերի, այնպես էլ՝ միջոցառումների մասով, անխուսափելիորեն տեղի էին ունենալու, ուստի 2018 թվականի պետական բյուջեում որոշակի միջոցառումների մասով ցուցանիշներ չեն սահմանվել:

**Հաշվեքննիչ պալատի մեկնաբանությունը**

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը 2018 թվականն է, որի ընթացքում ոչ ֆինանսական ցուցանիշների գծով ոչ միայն առաջընթաց չի արձանագրվել /ինչպես առաջարկվել էր Հաշվեքննիչ պալատի կողմից նախորդ տարի/, այլև արձանագրվել է հետընթաց: 2019 թվականին լիարժեք ծրագրային բյուջետավորման անցում կատարելու հանգամանքը ամենևին չի նշանակում, որ կարելի էր չսահմանել ոչ ֆինանսական ցուցանիշներ կամ չընդլայնել դրանց ծածկույթը: Վերջինիս իրականացման արդյունքում 2019 թվականին լիարժեք ծրագրային բյուջետավորման անցումը ավելի սահուն տեղի կունենար: Իսկ 2019 թվականի ՀՀ պետական բյուջեով սահմանված ծրագրերի իրականացումը բնութագրող ոչ ֆինանսական ցուցանիշների կատարմանը Հաշվեքննիչ պալատն անդրադարձ կկատարի հաջորդ տարվա իր եզրակացությամբ:

**Սույն ընթացիկ եզրակացությունը հիմք է հանդիսացել ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի կադարման վերաբերյալ ՀՀ հաշվեքննիչ պալատի եզրակացության կազմման համար, որտեղ ներկայացված են**

**առաջարկություններ: Ընթացիկ եզրակացությունը գերծ է օրենքով գաղտնիք պարունակող և անհատական տվյալներից:**

**Համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջի՝ ընթացիկ եզրակացությունը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրել ընթացիկ եզրակացությունում ամրագրված անհամապատասխանության, խեղաթյուրման վերացման, և ընթացիկ եզրակացության վերաբերյալ այլ գրավոր տեղեկատվություն:**